ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. հոկտեմբերի 25-28-ը Տալլին (Էստոնիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. **Անուն, ազգանունը՝**
   Գարեգին Մելքոնյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի առաջին տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Տալլին, Էստոնիայի Հանրապետություն, հոկտեմբերի 25-28-ը, 2017թ.

4. **Հրավիրող կողմը՝**
   Եվրոպական հանձնաժողով

5. **Գործուղման նպատակը՝**
   Մասնակցություն ԵՄ Արևելյան գործընկերության 4-րդ գործարար համաժողովին

6. **Քննարկված թեմաները՝**

Գործարար համաժողովի ընթացքում քննարկվել են՝

- Էլեկտրոնային կառավարում և թվային տնտեսություն. գործարարության և տնտեսական միջավայրի վերաստեղծում,
- Միջսահմանային առևտուր, նյութատեխնիկական ապահովում և էլեկտրոնային առևտուր. միջազգային գործարարության դյուրացում,
- Միջազգային բիզնեսի և նորարարությունների ֆինանսավորում,
- Նորարարական տեխնոլոգիաներ և հորիզոնական թվայնացում. աջակցություն ձեռնարկություններին տարբեր հատվածներում՝ նորարարության, ավտոմատացման և «խելացի» լուծումների միջոցով:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Արևելյան գործընկերության 4-րդ գործարար համաժողովին մասնակցում էին Արևելյան գործընկերության երկրների պատվիրակությունները, Եվրոպական Հանձնաժողովի տարբեր տնօրինությունների, Էստոնիայի, Ֆինլանդիայի, Բելգիայի, Բուլղարիայի, Չեխիայի, Դանիայի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հունաստանի, Հունգարիայի, Իռլանդիայի, Իտալիայի, Ղազախստանի, Լատվիայի, Լիտվայի, Մակեդոնիայի, Նիդերլանդների, Լեհաստանի, Ռումինիայի, Սլովակիայի, Իսպանիայի, Շվեդիայի, Մեծ Բրիտանիայի, Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Գործարար համաժողովի ընթացքում ներկայացվեց Արևելյան Գործընկերության դերն ու կարևորությունը Եվրոպական Միության և Արևելյան գործընկերության երկրների միջև հարաբերություններում, նշելով ԵՄ կողմից ընդունված կոնկրետ և արդյունքների վրա հիմնված մոտեցումը, որը ներկայացվել է ԵՀ կողմից պատրաստված «20 արդյունք մինչև 2020 թվականը» փաստաթղթում: Կարևորվեց նաև ս.թ. նոյեմբերին Բրյուսելում կայանալիք Արևելյան գործընկերության գագաթաժողովի և վերջինիս հետ կապված ընթացիկ և իրականացվելիք աշխատանքները: Ընդգծվեց, որ գործարար համաժողովը առաջիկա մի քանի տարիների ընթացքում կդառնա որպես ճանապարհային քարտեզ Արևելյան Գործընկերության և Եվրամիության միջև գործարար հարաբերությունների առաջնորդմանն ու նպաստմանը, որի հիմնական նպատակն է զարգացնել նորարարությունը և թվային տնտեսությունը, խթանել միջսահմանային առևտուրը, նպաստել արդյունաբերության և ֆինանսների նորարարական տեխնոլոգիաների ավելի լայն օգտագործմանը:

Քննարկվեցին էլեկտրոնային կառավարմանն ու էլեկտրոնային լուծումներին առնչվող հարցեր, շեշտելով, որ դրանք ստեղծում են թափանցիկ և միջսահմանային տնտեսության համար նպաստավոր միջավայր, խթանելով տնտեսական աճին, ինտեգրմանը և միջազգային առևտրին, ներկայացնելով Եվրոպական Միության և Արևելյան Գործընկերության երկրների էլեկտրոնային կառավարման և թվային հասարակության լավագույն փորձը, վերջին զարգացումները և հաջողության հիմնական գործոնները: Հանդիպման ընթացքում ներկայացվեց ԱլԳ երկրներում ՓՄՁ-ների համար մարտահրավերները, հնարավորությունները և զարգացման հնարավորությունները միջազգային շուկաներին հասանելիության համար, ընդգծելով ԵՄ թվային միասնական շուկան և էլեկտրոնային առևտուրը որպես միջսահմանային առևտրի և ՓՄՁ-ի արտահանման հնարավորությունների դյուրացման գործիք, ինչպես նաև կարևորվեց նյութատեխնիկական ապահովման ոլորտում նորարարությունները և էլեկտրոնային լուծումները, մատակարարման

շղթայի օպտիմալացումը, նյութատեխնիկական ապահովման ենթակառուցվածքի արդիականացմանն առնչվող հարցեր:

Գործարար համաժողովի ընթացքում ներկայացվեցին թե ինչպես են Թվային նորարարությունները և «խելացի» լուծումները ազդում բիզնեսի բոլոր ոլորտների՝ ներառյալ արտադրության տեխնոլոգիաների ավտոմատացման և տվյալների փոխանակման, մատակարարման շղթայի կառավարման և արժեքային շղթայի օպտիմալացման վրա՝ միևնույն ժամանակ նշելով ԵՄ և ԱլԳ երկրների միջև սերտ համագործակցության արդյունքում ստացված օգուտները նորարարությունների, «խելացի գործարանների» զարգացման և սերտ կապերը տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերության և նյութատեխնիկական ապահովման միջև:

Համաժողովի շրջանակներում քննարկվեց և ներկայացվեց արտաքին կապիտալի աղբյուրները, ԱլԳ երկրներում ՓՄՁ-ների համար ԵՄ աջակցության մեխանիզմները և այլընտրանքային ֆինանսավորման գործիքները արտահանման հնարավորությունների, տեխնոլոգիաների և նորարարությունների, միջսահմանային ներդրումների և Եվրամիության ինտեգրման համար:

Գործարար համաժողովի ընթացքում ԱլԳ բոլոր երկրների պատվիրակությունների ղեկավարները հանդես եկան մամուլի ասուլիսով:

Ասուլիսի ընթացքում իմ կողմից կարևորվեց գործարար համաժողովի անցկացումը և նշվեց, որ էլեկտրոնային կառավարման, նորարարության և դրանց առնչվող հարցերը գտնվում են տնտեսական զարգացման առանցքում: Ընդգծվեց, որ գործարար համաժողովը լավագույն հարթակ է հանդիսանում ամրապնդելու Եվրոպական Միության և ԱլԳ երկրների միջև բիզնեսի շփման և գործարարության զարգացմանն առնչվող հարցերը:

Կարևորվեց բիզնեսին աջակցող կազմակերպությունների դերը, որոնք նպաստում են երկրների միջև գործարար կապերի զարգացմանը, հատկապես շեշտելով, որ Եվրամիությունը հանդիսանում է Հայաստանի ամենամեծ առևտրային գործընկերներից մեկը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ժամանակ որևէ փաստաթուղթ չի ստորագրվել:

9. Գործուղվողը՝

Գարեգին Մելքոնյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

30.10.2017թ.